Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսերի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 5-րդ դասարանի երաժշտության և կերպարվեստի ուսուցչի /1-ական դասաժամ/ և 6-րդ դասարանի երաժշտության և կերպարվեստի ուսուցչի /1-ական դասաժամ/ թափուր աշխատատեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

_ դիմում /Ձև 1/,

_ մեկ լուսանկար 3Х4 չափի,

_ բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/

_ անձը հաստատող փաստաթուղթ

_«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն /առկայության դեպքում/,

_ ինքնակենսագրություն /Ձև 5/

_ այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ /առկայության դեպքում/

-- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

-- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/

_ որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի փետրվարի 26-ից մինչև մարտի 11-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 14:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. մարտի 14-ին՝ ժամը 13:00 –ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղի Ռ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գյուղ Վարսեր 7-րդ փողոց, 10-րդ շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 098764340 հեռախոսահամարով: